ConverseBank

1. **Ինչպե՞ս կարող եմ մասնակցել արշավին:**

Արշավին կարող եք մասնակցել, եթե հանդիսանում եք իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հաճախորդ և համապատասխանում եք որոշ չափորոշիչների:

2. **Ինչպե՞ս կարող եմ դառնալ C-POS հավելվածի օգտատեր:**

C-POS հավելվածի օգտատեր դառնալու համար անհրաժեշտ է դիմել Բանկ, կնքել պայմանագիր, ներբեռնել և ակտիվացնել C-POS հավելվածը:

3. **Ո՞ր ժամանակահատվածում C-POS-ն ակտիվացրած հաճախորդները կարող են մասնակցել արշավին:**

Մինչև հուլիսի 15-ը Բանկի հետ կնքելով անկանխիկ վճարումների ընդունման համապատասխան պայմանագիր և Android օպերացիոն համակարգով աշխատող հեռախոսներում ներբեռնելով և ակտիվացնելով C-POS՝ Դուք դառնում եք արշավի մասնակից:

4. **Ո՞ր ժամանակահատվածում պետք է կատարված լինեն գործարքները:**

Գործարքները պետք է կատարվեն մայիսի 15-ից օգոստոսի 15-ն ընկած ժամանակահատվածում:

5. **Որտե՞ղ կարող եմ ծանոթանալ արշավի պայմաններին:**

Արշավի պայմաններին կարող եք ծանոթանալ՝ անցնելով Բանկի կայք հետևյալ հղումով՝ https://bit.ly/3In7ycl

6. **Ի՞նչ օպերացիոն համակարգերով սմարթֆոններում կարելի է ներբեռնել C-POS հավելվածը արշավին մասնակցելու համար:**

Արշավին կարող եք միանալ Android օպերացիոն համակարգով աշխատող սմարթֆոնով, որն ունի NFC մոդուլ:

7. **Որքա՞ն գործարքի/ների համար գանձված միջնորդավճարներն են փոխհատուցվելու ամբողջությամբ:**

Դուք կարող եք ստանալ մինչև օգոստոսի 15-ն ընդունված հանրագումարային մինչև 500,000 ՀՀ դրամ գործարքների համար գանձված միջնորդավճարների ամբողջությամբ փոխհատուցում:

8. **Ի՞նչ այլ հավելյալ հնարավորություններից կարող եմ օգտվել՝ մասնակցելով C-POS արշավին:**

Մասնակցելով արշավին՝ իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր, ՀՀ ռեզիդենտ հաճախորդներն ըստ ցանկության կստանան Visa Business քարտ՝ 0 ՀՀ դրամ տարեկան սպասարկման վճարով քարտի գործողության ողջ ընթացքում: